armath

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021-2022 ուս. տարի

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏՈՒԺ

Ամփոփում

2022թ.-ի դեկտեմբեր ամսվա տվյալների համաձայն Հայաստանի, (այդ թվում Արցախի), Վրաստանի և Հնդկաստանի, Քուվեյթի, Բանգլադեշի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Լոս Անջելեսի տարածքում գործում է 641 «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներ, որտեղ շուրջ 17,000 երեխա ստանում է անվճար ինժեներական կրթություն:

Ըստ Գրանթ Թորնթոն Քնսալթինգ ՓԲԸ-ի 2022 թվականի գնահատականի սաների.

- 50%-ը ընդունվել են քոլեջներ
- 46%-ը տեղական համալսարաններ
- 3%-ը միջազգային համալսարաններ

Շրջանավարտների՝

- 21%-ն աշխատում է SS ոլորտում
- 34%-ն աշխատում է այլ ոլորտներում
- 44%-ը զինծառայող է
- 2%-ը Start-up-ի հիմնադիր



«Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցներ

ԽՈՍՈՒՄ Է ԱՐՄԱԹԸ

Արմաթում մեկնարկել է «Խոսում է Արմաթը / Armath Talks» միջոցառումը, որի առաջին միջոցառումը տեղի ունեցավ Լոռու մարզի Շնող համայնքում, որին մասնակցեցին նաև հարակից Թեղուտ, Նեղոց, Ախթալա, Ձոճկան, Քարկոփ և Ալավերդի համայնքների Արմաթցիները: Միջոցառման բանախոսների շարքում էին ARLOOPA ընկերության համահիմնադիր Խաժակ Հոբոսյանը և «Մարզերի երեխաները մարզերում» ՀԿ համահիմնադիր Մայիս Մարգարյանը: Միջոցառման նպատակն է զարգացնել Արմաթցիների փափուկ հմտությունները:

«ԴԻՋԻԿՈԴ» ՄՐՑՈՒՅԹ

Ապրիլի 9-10-ը ամբողջ Հայաստանում «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցների սաները մրցում էին պատանեկան ծրագրավորման «ԴիջիԿոդ» 2022 մրցույթի հանրապետական փուլի ուղեգրի համար: Ստացվել էր շուրջ 950 հայտ 1000-ից ավել անհատ երեխաների և թիմերի կողմից, որոնցից մարզային փուլին ներկայացվեցին 400-ից ավելի աշխատանքներ:
Ապրիլի 9-ին մարզային փուլն անցկացվեց միաժամանակ 4 քաղաքներում. Գյումրիում, Վանաձորում, Իջևանում, Գորիսում: Ապրիլի 10-ին տեղի ունեցած մարզային փուլին մրցեցին Երևանի և մերձակա մարզերի պատանի ծրագրավորողները:

Այնուհետև ՀԱՀ-ում տեղի ունեցած «ԴիջիԿոդ» կիրառական ծրագրավորման մրցույթի հանրապետական փուլին մասնակցեց 72 պատանի Հայաստանի բոլոր մարզերից, Ջավախքից և Հնդկաստանից:
Մարզային փուլը հաղթահարած բոլոր մասնակիցները ստացան հատուկ մրցանակ՝ տեխնոլոգիական և կրթական շրջայցերի տեսքով, իսկ ամեն անվանակարգում հաղթող ճանաչված թիմերը ստացան շնորհակալագրեր ԿԳՄՍՆ և մրցույթի կողմից, ինչպես նաև «Արմաթ» տեխնոլոգիական ճամբարի, շրջայցերի ուղեգրեր և դրամական պարգևներ:

«ԱՐՄԱԹԻՑ ՏՏ ՈԼՈՐՏ» ԿՐԹԱԿԱՆ ԱՐՇԱՎ

Արմաթում մեկնարկել է «Արմաթից ՏՏ ոլորտ» կրթական արշավները, որի նպատակն է ներմարզային Արմաթ տեխնոհամայնքի ստեղծումը և այդ տեխնոհամայնքում մարզային այլ մասնագետների ներգրավվումը: 2022 թվականին կայացել է Արագածոտնի և Արմավիրի մարզերում: Արշավներին մասնակցեցին մարզի բոլոր «Արմաթ» աշխատանոցների խմբավարներն ու սաները: Օրակարգում ներառվում են՝ փորձի փոխանակում, ինտելեկտուալ խաղեր, ինքնապաշտպանության և զենքին տիրապետման արվեստի դասընթացներ,ազգային պարեր:

«ԱՐՄԱԹՆ ՕԴՈՒՄ» ԱԹՍ ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՈՑՆԵՐ

«Արմաթն օդում» ԱԹՍ կրթական աշխատանոցների թիվը 2022 թվականի ավարտին հասավ 13-ի՝ Շիրակ, Լոռի, Տավուշ, Արցախ, Գեղարքունիք, Սյունիք, Արագածոտն, Արարատ մարզերում և Երևանում:
Երեխաներն ԱԹՍ աշխատանոցներում հնարավորություն են ստանում սովորել անօդաչու թռչող սարքերի աշխատանքի տեսական գիտելիքներ, յուրացնելու դրանց նախագծման ու պատրաստման, ծրագրային ապահովման, տեխնիկական սպասարկման և կառավարման առանձնահատկությունները:

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՑ ԱՐՄԱԹ ԽՄԲԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կարևորելով անգլերեն լեզվի դերը SS ոլորտի զարգացման գործում ԱՏՁՄ-ն 2022 թվականին կազմակերպեց անգլերեն լեզվի առցանց դասընթացեր Արմաթ լաբորատորիաներում դասավանդող խմբավարների համար, 550 խմբավարներից դասընթացին մասնակցեցին 241 խմբավար, իսկ որպես դասավանդող մեզ միացան հայաստանում գործող մի շարք համալսարանների դասախոսներ և ուսանողներ, ինչպես նաև անհատներ:



ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ

ՀԱԱՀ-ում անցկացվեց Ճարտարագիտական մոդելավորման 3-րդ մրցույթը, որի ընթացքում «Արմաթ»-ի սաները ցուցադրեցին եռաչափ մոդելավորման իրենց գիտելիքները, հմտությունները և ճարտարագիտական դետալների ու մեխանիզմների պատրաստման լուծումները: Մրցույթին մասնակցեցին մոտ 200 սաներ Հայաստանի տարբեր անկյուններից:

«ԱՐՄԱԹԸ» ՏՀՏ ՀԱՎԱՔԻՆ

Հունիսի 5-12-ը ԱՏԶՄ կողմից կազմակերպված տեխնոռազմամարզական հավաքին իրենց մասնակցությունն ունեցան Արմաթ տեխնոհամայնքի 26 ներկայացուցիչներ՝ խմբավարներ և համակարգողներ:
Ծրագրի շրջանակներում ՏՀՏ ընկերությունների շուրջ 200 աշխատակիցներ մասնակցեցին կրակային և մարտավարական բազային պատրաստության վարժանքների:

ԱՏԶՄ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՃԱՄԲԱՐՆԵՐ

2022 թվականին ԱՏԶՄ-ն կազմակերպեց 4 տեխնոլոգիական ճամբար՝

- Արմաթ տեխնոլոգիական ճամբար (կրտսեր խումբ, 200 մասնակից Արմաթ համայնքից)
- Դիջիքեմփ եռամրցաշար (190 մասնակից Հայաստանից և Ջավախքից)
- Արմաթ տեխնոլոգիական ճամբար (ավագ խումբ, 140 մասնակից Արմաթ համայնքից)
- ԱԹՍ տեխնոլոգիական ճամբար (20 մասնակից ԱԹՍ լաբերից)

ԱՐՄԱԹԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ

2022 թվականին Արմաթում անցկացվել է 4 համաժողով՝ 1 կենտրոնական և 3 մարզային: Համաժողովների ընթացքում քննարկվել, առաջարկվել և իրագործվում են մի շարք բովանդակային և կազմակերպչական գործընթացներ:
Մարզային համաժողովներն իրականացվել են Տավուշի, Արարատի և Շիրակի մարզերում, որոնց մասնակցել են տվյալ մարզի բոլոր խմբավարները: Իսկ կենտրոնական համաժողովն իրականացվել է Դիլիջանում, որին մասնակցել են Արմաթ տեխնոհամայնքի 550 խմբավարներից 100-ը, ինչպես նաև ԿԳՄՍՆ, ԲՏԱ, ԱՏԶՄ և այլ մասնավոր հատվածից ներկայացուցիչներ:

«Հալք» ԱԹՍ մրցույթ

Սեպտեմբերի 10-11-ին տեղի ունեցավ «Կարեն Վարդանյան»-ի անվան կրթական հիմնադրամի և ԱՏԶՄ կողմից համատեղ կազմակերպված «Հալք 2022» ԱԹՍ մրցույթը, որին մասնակցեց ընդհանուր 41 թիմ, որոնցից 23-ը՝ դպրոցական, 5-ը՝ մասնագիտական, 13-ը՝ սիրողական:
41 թիմից 22-ը Արմաթն օդում և Արմաթ ճարտարագիտական աշխատանոցներում ձևավորված թիմերն էին: Մրցանակակիր 6 թիմերից 3-ը Արմաթ թիմերն էին:

ԱՐՄԱԹԸ STARMUS ԳԻՏՈՒԹՅԱՆ ՓԱՌԱՏՈՆԻՆ

2022 թվականին Հայաստանում իրականցվող Սթարմուս գիտության ճամբարի շրջանակներում կազմակերպված գիտության ճամբարին իր առանձին տաղավարով ներկայացավ Արմաթը: Իսկ Արմաթ համայնքից 20 սան հնարավորություն ունեցան մասնակցելու հայազգի տիեզերագնաց Ջեյմս Բաղյանի ելույթին:

ՄԱՐԶԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ

2022 թվականին Արմաթում մեկնարկել ենք մարզային ցուցահանդեսների շարք, որի սկիզբը տրվեց Արցախից: Ցուցահանդեսում աշխատանոցները հնարավորություն ստացան ներկայացնելու իրենց նախագծերը, խելացի լուծումները, ռոբոտները, ավտոմատացման համակարգերը, եռաչափ տպիչով կամ ԹԿՀ հաստոցով պատրաստված ճարտարագիտական մոդելները:
Տեղի ունեցավ նաև «Արցախի SeRob-ները» խորագրով ռոբոտաշինության մրցույթ:

ԱՐՄԱԹԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻ

Թունիսիայի Ջերբա քաղաքում Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 18-րդ գագաթնաժողովին ընդառաջ գործում է Ֆրանկոֆոնիայի ավան, որտեղ մասնակից երկրները ցուցադրում են իրենց երկրների մշակութային բազմազանությունը և ձեռքբերումները տարբեր ոլորտներում:

Հայաստանը ներկայացավ «Մշակույթ և տեխնոլոգիա» խորագիրը կրող տաղավարով, որի տեխնոլոգիական հատվածում ներկայացվում էր Արմաթ ճարտարագիտական աշխատանոցների կրթական մոդելը:

ԱՐՄՌՈԲՈՏԻՔՍ 2022

2022 թվականի դեկտեմբերի 11-ին Դիլիջանի կենտրոնական դպրոցում տեղի ունեցավ «ԱրմՌոբոտիքս» հայաստանյան 14-րդ առաջնությունը, որն այս տարի կրում էր «Ինքնակառավարվող ռոբոտները՝ խելացի ագարակում» խորագիրը: Մասնակցության հայտ ներկայացրած 130 թիմերից եզրափակիչ փուլում էին 39 թիմեր Հայաստանի (ներառյալ՝ Արցախը) «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցներից, Գյումրու «Զարգացման լաբորատորիա» հիմնադրամից և Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջից:

ԱՐՄԱԹ. TECH WEEK GYUMRI 2022

2022 թվականին ԱՏԶՄ կրթական ծրագրերի տնօրեն Շամամ Գևորգյանը Tech Week Gyumri 2022 միջոցառմանը ներկայացրեց Արմաթ-ի գաղափարախոսությունն ու տեսլականը:

ԱՐՄԱԹ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

2022 թվականին «Արմաթ» ծրագիրն արտահանվել է Քուվեյթ (1 լաբ), Բանգլադեշ (1 լաբ), Ֆրանսիա (1 լաբ), Գերմանիա (1 լաբ), ԱՄՆ (1 լաբ), Հնդկաստանում տեղի համակարգողի կազմակերպմամբ բացվել է ևս 1 աշխատանոց և Հնդկաստանում ընդհանուր աշխատանոցների թիվը կազմում է 3:

Դեսպանների այց «Արմաթ»

«Արմաթ»-ը հյուրընկալեց մի շարք երկրների դեսպանների և դեսպանատների ներկայացուցիչների:

- Չինաստանի ժողովրդական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Ֆան Յոնգ
- Եվրոպական Միության դեսպան տիկին Անդրեա Վիկտորի
- Բուլղարիայի Հանրապետության դեսպան պարոն Կալին Անաստասով
- Ռուսաստանի Դաշնության դեսպան Ն.Գ. պարոն Սերգեյ Կոպիրկին
- Լեհաստանի Հանրապետության դեսպան պարոն Պավել Սիեպլակ
- Շվեդիայի Թագավորության դեսպան Ն.Գ. պարոն Պատրիկ Սվենսոն
- Նիդերլանդների Թագավորության դեսպան պարոն Նիկո Սխեմերս
- Ճապոնիայի դեսպան պարոն Ֆուկուսիմա Մասանորի
- Սերբիայի Հանրապետության դեսպան Տատյանա Պանայոտովիչ Ցվետկովիչ
- Իրանի Իսլամական Հանրապետության դեսպան պարոն Աբբաս Բադախշան Զոհուրի
- Ֆրանսիայի Հանրապետության դեսպանություն
- Ուրուգվայի Հանրապետության դեսպանություն

ԱՐՄԱԹ. ՀԱՂԹԱՆԱԿԻ ԴՐՈՇ

Scan me!

ՀԵՏԵՎԵՔ ՄԵԶ

ԱՊԱԳԱՅԻ ԱԼԳՈՐԻԹՄ

(+374)11 548881 info@armath.am www.armath.am